



**ԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՄԻՍ 2017**

# ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ



*Բոլոր նրանց համար, ում մտահոգում է մեր մոլորակի ապագան*

## Պայմանները

- ◆ մրցույթին մասնակցությունն ԱՆՎՃԱՐ է,
- ◆ յուրաքանչյուր մասնակից կարող է ներկայացնել մեկ ստեղծագործություն/գաղափար.
  - ամենաքիչը 5 լուսանկարով և նկարագրական տեքստով, կամ
  - վերամշակման գաղափարի տեսահոլովակ,
- ◆ աշխատանքները կարող են պատրաստված լինել վերամշակված ցանկացած իրից, կամ կարող եք ներկայացնել միայն վերամշակման գաղափարը,
- լուսանկարներին կից տեքստը կարող է լինել docx կամ pdf ձևաչափերով,
- յուրաքանչյուր լուսանկար պետք է լինի .jpg կամ .png ձևաչափերով,
- ստեղծագործությունը պետք է լինի Ձեր հեղինակային աշխատանքը, ոչ թե կրկնօրինակված կամ համացանցից բեռնված,
- ◆ ստեղծագործության հեղինակային իրավունքը փոխանցվում է ՀՀ կենտրոնական բանկին՝ դիմում-հայտում նշված համաձայնությամբ: Աշխատանքները կարող են օգտագործվել կրթական, տեղեկատվական բնույթի նյութերում, ցուցադրվել տարբեր միջոցառումների ժամանակ,
- ◆ ստեղծագործության վրա պետք չէ նշել հեղինակի անունը կամ կատարել ինքնությունը բացահայտող այլ գրառումներ:

## Ե՞րբ կհայտարարվեն արդյունքները

Հաղթողների անունները կհրապարակվեն, և մրցանակները կհանձնվեն մայիսին «Իմ ֆինանսների ամիս 2017» ծրագրի փակման արարողության ժամանակ: Արդյունքների մասին կարող եք տեղեկանալ նաև [www.abcfinance.am](http://www.abcfinance.am) կայքից:

## Թեմա

ՀՀ կենտրոնական բանկը «Իմ ֆինանսների ամիս 2017» ծրագրի շրջանակում սիրով հրավիրում է մասնակցելու վերամշակման մրցույթի՝ «Խնայիր փողը՝ խնայելով բնությունը» խորագրով: Օգտագործելով ամօրյայում կիրառվող իրերը և Ձեր վառ երևակայությունը՝ պատրաստեք վերամշակված ստեղծագործություն կամ ներկայացրեք վերամշակման Ձեր գաղափարը, որը կօգնի խնայել գումար և շրջակա միջավայրը:

**Ո՞ւմ համար**  
 Մրցույթին մասնակցելու համար **տարիքային սահմանափակում չկա:**

**Ե՞րբ**  
 Աշխատանքները կընդունվեն **2017 թվականի մարտի 10-ից մայիսի 8-ը:**

**Ինչպե՞ս մասնակցել**

**Քայլ 1.**  
 Մասնակցության համար [www.abcfinance.am](http://www.abcfinance.am) կայքի «Իմ ֆինանսների ամիս 2017» **Վերամշակման մրցույթ** բաժնից անհրաժեշտ է բեռնել **ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԸ**, ծանոթանալ դրույթներին, լրացնել ու կցել վերամշակված ստեղծագործությանը:

**Քայլ 2.**  
 Ներկայացնել վերամշակված ստեղծագործության նկարագրությունն ու լուսանկարները (առնվազն 5 հատ) կամ կարճամետրաժ տեսահոլովակը և **ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԸ** ՀՀ կենտրոնական բանկի հետևյալ տարբերակներից մեկով՝  
 ■ Ուղարկել [consumerinfo@cba.am](mailto:consumerinfo@cba.am) էլ. հասցեով՝ նամակի վերնագիրը նշելով **ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ**,  
 ■ Բերել ՀՀ կենտրոնական բանկի CD/DVD սկավառակով. աշխատանքային օրերին, ժամը 9:00-ից 18:00-ը՝ նախապես զանգահարելով **010 592 715** հեռախոսահամարով:

**Մրցանակներ**  
 Ժյուրին կընտրի 3 լավագույն աշխատանքները, որոնց հեղինակները կարժանանան հատուկ մրցանակների՝  
**1-ին տեղ՝ 100000 դրամ,**  
**2-րդ տեղ՝ 75000 դրամ,**  
**3-րդ տեղ՝ 50000 դրամ:**  
 Լավագույն աշխատանքները կտեղադրվեն [www.abcfinance.am](http://www.abcfinance.am) կայքում, սոցիալական կայքերի (Facebook, Twitter) համանուն էջերում:  
 Կարող են լինել նաև հատուկ մրցանակներ բանկերի, ապահովագրական ընկերությունների, վարկային կապակերպությունների և այլ ֆինանսական կառույցների կողմից:

## Ո՞ր դիմել հարցերի դեպքում

- ✉ [consumerinfo@cba.am](mailto:consumerinfo@cba.am)
- 🐦 [@abcfinance\\_CBA](https://twitter.com/abcfinance_CBA)
- 🌐 [www.abcfinance.am](http://www.abcfinance.am)
- ☎ +37410592697
- f [ABCFinance.am](https://www.facebook.com/ABCFinance.am)
- # [#MFM2017](https://twitter.com/abcfinance_CBA)

